

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԶԱՏԻԿ ԵՎ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՏՈՆԵՐԸ 1920-1930-ԱՎԱՆ ԹԹ.

Սամվել Մկրտչյան

Պատմական գիտությունների դոկտոր
ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ
Խ. Աբովյան 52, 0025, Երևան, Հայաստան
Էլ. հասցե՝ sam1959dok@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 04.03.2019, գրախոսվել է 16.10.2019, ընդունվել է
տպագրության 06.12.2019

Ներածություն

Խորհրդային Հայաստանում 1920-1930-ական թթ. հայոց ավանդական տոները մեծ հալածանքի ենթարկվեցին պետության կողմից: Այդ մերժողականությունը կապված էր բոլշևիկյան հակակրոնական և ապագային գաղափարախոսության հետ: Դրա հետևանքով, աստիճանաբար դուրս մղվեցին եկեղեցական տոնաձիսական գրեթե բոլոր բաղադրիչները: Միայն ընտանեկան և ազգակցական միջավայրը կարողացավ մասամբ պահպանել հնամենի ավանդույթները, որը պայմանավորված էր միջսերնդային ժառանգորդությամբ:

Աթեիստական գաղափարախոսության պայմաններում, երբ գործում էին հատուկենտ եկեղեցիներ, Հայոց եկեղեցին հնարավորինս կարողացավ պահպանել զուտ կրոնական արարողությունները: Ճիշտ է, ընտանիքն ու ազգակցական միջավայրը միշտ էլ կարևոր դերակատարություն են ունեցել ավանդույթների պահպանման գործում, սակայն այս ոլորտում ևս նկատվում էին տոների անկման և ձևափոխման միտումներ:

Սույն հոդվածում խորհրդային մերժողականության համատեքստում փորձել ենք անդրադառնալ հայոց քրիստոնեական Տերունի երկու տոներին՝ Զատիկին և Համբարձմանը, որոնք հատուկ հալածանքի ենթարկվեցին իշխանությունների կողմից, քանի որ վերջիններս նրանցում տեսնում էին կրոնական գաղափարախոսություն քարոզելու վտանգներ:

Թեման կարևորվում է ոչ միայն զուտ ճանաչողական նշանակությամբ, այլև կրոնական-համակարգային փոփոխությունների գործընթացում մերժողականության դրսևորումների տեսանկյունից (այն է՝ հոգևորականների հալածանք, սրբազան կառույցների վերացում, դավանանքի ձևով պայմանավորված՝ տոնաձիսական նոր գաղափարախոսության մշակում և այլն): Խոսքը վերաբերում է ոչ միայն կրոնական (օրինակ՝ հեթանոսությունից քրիստոնեության անցումը), այլև քաղաքական գաղափարական

համակարգերի (օրինակ՝ Հայոց Ազգային պետությունից անցումը խորհրդային) փոփոխություններին: Ուշագրավ է այն հանգամանքը, որ եթե առաջին դեպքում գործ ունենք զուտ դավանաբանական ձևերի փոփոխման հետ, ապա երկրորդում կրոնը մերժվում էր ընդհանրապես և նույնիսկ՝ իր հեթանոսական հիմքերով, որը շատ հստակ երևում է նշված տոների օրինակով:

Մեթոդ

Այս հետազոտության մեթոդաբանության հիմքում պատմահամեմատական վերլուծություններն են:

Հանգամանալից վերլուծվել են թեմային առնչվող նյութերը և եղած սակավաթիվ ուսումնասիրությունները: Սակայն այս համատեքստում կարևորվում են տվյալ ժամանակի մամուլի տվյալները, որոնք չնայած հակակրոնական ուղղվածությանը, ունեն բավական կարևոր սկզբնաղբյուրների արժեք: Բացի այդ, նույնիսկ դրանց մերժողականության ենթատեքստում առավել ընկալելի են ավանդույթների պահպանվածության արեալները և դրսևորման ձևերը:

Ուշագրավ են հատկապես 1980-ականներին Հայաստանի տարբեր բնակավայրերում իրականացված դաշտային ազգագրական հետազոտությունների ընթացքում բանասացներից գրանցված արժեքավոր և եզակի տվյալները, որոնցով էլ ավելի է հիմնավորվում մեր ուսումնասիրությունը:

Զատիկ

Զատիկ կամ Քրիստոսի Հարություն տոնի կապակցությամբ իշխանությունները կազմակերպում էին հակակրոնական միջոցառումներ՝ միտինգներ, երթեր, դասախոսություններ, թատերականացված ներկայացումներ, դիմակահանդեսներ, ցուցահանդեսներ և այլն¹: Դրանց կազմակերպիչները հիմնականում «գավխորհուրդի կողմից ստեղծված բջիջներն էին»²:

Ակումբային, թատերական և գործարանային զեկուցումներից ու դասախոսություններից բացի, բոլշևիկյան մամուլում հաճախ հրատարակվում էին հողվածներ, որոնց հեղինակներն, անդրադառնալով տոնի նախաքրիստոնեական արմատներին, զուգահեռներ էին անցկացնում նաև

¹ Անաստված 1929, № 5-6, 24-25, Խորհրդային Հայաստան 1923, ապրիլի 7, 1-2, Խորհրդային Հայաստան 1923, ապրիլի 7, 2, Անաստված 1929, № 3, 13:

² «Քրիստոսի ծննդյան» և «հարության» առթիվ տարածված հակակրոնական կամ պանիայի ընթացքում Ա.Մ. գավխորհուրդի կողմից կազմակերպված են 20 նոր բջիջներ և 4 խմբակներ: Ներկայումս Ա.Մ. գավառային կազմակերպությունն ունի 63 բջիջ և 4 խմբակ, որոնք ընդգրկում են 5225 անդամներ» (Անաստված 1929, № 5-6, 24):

այլազգիների շրջանում տարածված նմանատիպ տոների հետ³:

Բոլշևիկները *պատրմականորեն ուսումնասիրում և վերագնահատում էին* Չատիկը՝ այն ամբողջությամբ ժխտելու նկատառումներով. «ԱՄ⁴ Կենտրոնի տվյալների համաձայն հակազատկական կամպանիան շատ ավելի աշխույժ է ընթացել, քան հակաձննդանը: Այդ տվյալները վկայում են, որ շատ տեղական ԱՄ խորհուրդներ ժամանակին չեն պատրաստվել կամպանիայի համար: Կրոնականներն իրենց ելույթներում տեղ-տեղ հասել են մինչև խորհրդային կառավարության դեմ ուղղված հակահեղափոխական կոչերի: Մոսկվայում, ընկ. Ֆրունզեի անվան ֆաբրիկայում բաբտիստները (աղանդավորներ) նախազատկական կամպանիայի ժամանակ շրջում էին բանվորական կազարմաներում և ագիտացիա էին մղում, որ բանվորները չմասնակցեն ֆաբրիկայի ընտրության և Չատիկ տոնին»⁵:

Այս ավանդական տոնի նկատմամբ հրապարակումների մերժողական, անհանդուրժողական վերաբերմունքը պայմանավորված էր քաղաքական իրավիճակով, քանի որ նորելուկ գաղափարախոսների համար թշնամիներ էին ոչ միայն քրիստոնեական Չատիկը և այն նշող եկեղեցին՝ իր հոգևոր ծառայողներով, այլև Չատիկի հեթանոսական նախատիպը՝ իր քրմական դասով, որոնք դարձյալ «շահագործել են աշխատավորներին»: Շատ հաստատություններում իշխանությունների հովանավորությամբ որոշումներ էին ընդունվում այդ օրերին պարտադիր աշխատելու վերաբերյալ, և դրանով իսկ անտեսում իրենց իսկ հաստատած պետական դեկրետներն ու օրենքները⁶:

Քրիստոնեականը մերժելու նպատակով իշխանությունները կազմակերպում էին «կոմերիտական զատիկներ», որոնց միջոցով փորձում էին *բացահայտել և քարոզել կրոնական այդ և մյուս տոների հեղափոխական իմաստը*⁷:

Եկեղեցիները փակելու և ավերելու հետևանքով աստիճանաբար անկում էին ապրում Չատիկի կրոնական գլխավոր արարողությունները (ճրագալույց-խթում, պատարագ, ժամերգություն, ուխտ, մատաղ և այլն):

Չնայած հալածանքներին, տոնի ավանդական շատ բաղադրիչներ շարունակում էին գոյատևել՝ սկսած զատկական ծիսական ուտեստից (ծու,

³ Նիմանդ, Խորհրդային Հայաստան 1923, ապրիլի 7, 2, Նիմանդ, Անաստված 1930, № 4, 6-8, Նիմանդ, Անաստված 1931, № 3, 4-6, Նիմանդ 1931, 79-81:

⁴ ԱՄ - Անաստվածների միություն:

⁵ Անաստված 1929, № 5-6, 24-25:

⁶ Խորհրդային Հայաստան 1923, ապրիլի 5-6, 4, Մաճկալ, 1924, ապրիլի 25, Պետրոսյան, Անաստված 1930, № 4, 3-5:

⁷ Խորհրդային Հայաստան, 1923, ապրիլի 7, 2, Ավանգարդ 1924, ապրիլի 17, 1, Արծրունի 1982, 35-40:

փլավ, գաթա և այլն), ձվախաղերից, վեգախաղերից մինչև ավստո-մատաղը (զոհաբերում էին գառ, երինջ, եգ և այլն), շնորհավորական փոխայցելությունները, մեռելոցները և ուխտերը: Պահպանվում էին նաև գատկական ժողովրդական երգերի որոշակի տարրեր, որտեղ արտացոլված էին աշխատավորների հույսերն ու սպասելիքները՝ կապված սպասվելիք բերքի հետ⁸:

Ընդունվում էին դեպքեր, երբ ակտիվիստների նախաձեռնությամբ, գյուղացիները նույնիսկ հրաժարվում էին ընդունել ծխական քահանային. «Ողջաբերդում գյուղացիների մեծ մասը Քրիստոսի Զատիկը չտոնեց: Առավոտյան տերտերն ու տիրացուն եկան գյուղ, տեսան՝ գյուղացիները չարացել են և նրանց չեն ընդունում: Նրանց վրա մեծ ազդեցություն է գործել շրջկոմի կազմած դասախոսությունը: Տերտերն ու տիրացուն հուսահատ գնացին Շոր-բուլախ գյուղը: Բայց այնտեղ էլ ընդունելություն չգտան: Շոր-Բուլախցիք այդ օրը մինչև անգամ կերակուր չեփեցին, որպեսզի երդիկներից ծովս չբարձրանար և գատկվա տպավորություն չառաջացներ»⁹:

Իշխանությունների ճնշմամբ, խթամի երեկոյան ոչ թե եկեղեցի էին գնում, այլ՝ թատրոն՝ հակազատկական ներկայացումներ դիտելու նպատակով¹⁰:

Ընդհանուր առմամբ, տոնն առավել կենսունակ էր գյուղական շրջաններում¹¹: Քաղաքային միջավայրում նկատվում էր անկման միտում, որը պայմանավորված էր հալածանքների ուժգնությամբ (քանի որ հիմնականում քաղաքներում էին կենտրոնացած խորհրդային գաղափարախոսական կառույցները):

Ինչ վերաբերում է Զատիկի մասնակիցների սոցիալական կազմին, ապա այն մեծ մասամբ բաղկացած էր տարեցներից (մասնավորապես՝ կանանցից)¹²: Իսկ «Կոմերիտական Զատիկ» մասնակիցները հիմնականում հասարակական-քաղաքական կազմակերպություններին անդամագրված երիտասարդությունն էր:

Զատիկի նկատմամբ պետական վերաբերմունքն արտացոլվեց նաև

⁸ ԴԱՆ 1986, Ապարանի շրջան, գ. Վարդենուտ, 6-7, ԴԱՆ 1986, Ապարանի շրջան, գ. Քուչակ, 19, ԴԱՆ 1986, Արագածի շրջան, գ. Ծաղկահովիտ, 31-35, ԴԱՆ 1986, Արագածի շրջան, գ. Նորաշեն, 42, ԴԱՆ 1986, Արագածի շրջան, գ. Գեղաձոր, 78-79, ԴԱՆ 1987, Հրազդանի շրջան, գ. Արզական, 16, ԴԱՆ 1987, Ախուրյանի շրջան, գ. Վահրամաբերդ, 32-33, ԴԱՆ 1987, Ախուրյանի շրջան, գ. Կապս, 13, ԴԱՆ 1987, Հրազդանի շրջան, գ. Քաղսի, 15-23, 65-67, ԴԱՆ 1987, Ախուրյանի շրջան, գ. Լեռնուտ, 48, Մկրտչյան 2016, 171-172, Նիմանդ 1931, 80-81, 122, Անաստված, 1928, № 5-6, 12:

⁹ Նահապետյան, Անաստված 1929, № 4, 17:

¹⁰ Լազար 1929, Անաստված, № 4, 17:

¹¹ Անաստված 1932, № 5-6, 3-5:

¹² Լազար 1929, Անաստված, № 4, 17:

խորհրդային պոեզիայում, ինչպես, օրինակ՝

Տերտերի ողբը (1929 թ.)

- Քեզ սպասող չմնաց
 ուր ես գալի այ Ջատիկ,
 դանելի ասող չմնաց
 զուր ես գալի, այ Ջատիկ:
 Ցավ ու վիշտը մեզ պատեց,
 նոր սերունդը մեզ ատեց.
 մենք դառել ենք կեղտ ու մուր,
 մեզ չեն տալիս խեչամբուր:
 Դաշնակները հեռացան,
 էլ հայրենիք չդարձան.
 մեր թալան ու քեփերը
 ախ, ախ, նրանք մոռացան:

Էս անաստված նորերը
 սև արին մեր օրերը
 կրթեցին փոքր ու մեծին
 ախ, մեզ «փառք»-ից զրկեցին:
 Քեզնով խնդող չմնաց
 ո՞ւր ես գալի, այ գատիկ
 էլ աղոթող չմնաց
 զուր ես գալի սեվ Ջատիկ¹³:

Համբարձում

Համբարձումը 1920-1930-ական թթ. կենցաղում դեռևս շարունակում էր ընկալվել որպես երիտասարդության և հատկապես երիտասարդ կանանց ու չամուսնացած աղջիկների տոն¹⁴: Այդ շրջանում պահպանվել էին այս տոնի ավանդական ծիսաշարի գլխավոր բաղադրիչները, մասնավորապես «Վիճակ-Ջանգյուլումը»՝ իր նախապատրաստական, ծիսահմայական բնույթի արարողությունների և խաղիկների գրեթե ողջ համալիրով¹⁵:

Մասամբ պահպանվել էին նաև «Լեյլի և Մեջլում» սիրահար զույգի մասին ավանդագրույցները: Հավատալով, որ Համբարձման գիշերը ջրերը բուժիչ զորություն են ստանում՝ շատերը լողանում էին՝ ցավերից ազատվելու հույսով ու հավատով:

Աղջիկները տոնի նախորդ օրը դաշտերից հավաքում էին երեք-նուկ, ինչպես նաև քարեր ու զցում խնոցու մեջ՝ հավատալով դրանց առատություն պարզևող զորությանը:

Գիշերը դաշտերում արածելու էին հանում կթան կովերին՝ նրանց չար աչքից պաշտպանելու հավատով: Տղաները «համբարձման սիրելի եզների» վրա փալասներ էին զցում և շրջում բնակավայրում՝ բնամթերք (յուղ, գաթա և այլն) հավաքելու նպատակով:

¹³ Ներսիսյան, Անաստված 1929, № 6, 12:

¹⁴ Նիմանդ 1931, 85, Անաստված 1929, № 4, 8-9:

¹⁵ ԴԱՆ, Վարդենուտ, 8-9, ԴԱՆ, Ծաղկահովիտ, 35-36, ԴԱՆ, Գեղադիր, 21, ԴԱՆ, Մելիք գյուղ, 92, ԴԱՆ, Վահրամաբերդ, 37-38, ԴԱՆ, Քաղսի, 25-27, 68-70, ԴԱՆ, Արգական, 8:

Տոնի ավանդական հիմնական ուսեստը կաթնապուրն էր¹⁶:

Տարածված էին շնորհավորական փոխայցելությունները (հասկապես՝ նորահարս ունեցողների շրջանում), առավել ևս, որ այդ տոնը դեռևս առնչվում էր նորահարսների դարձի սովորության ժամկետին (Չատկից մինչև Համբարձում)¹⁷: Դաշտերում և կալերում կազմակերպվում էին խնջույքներ, խաղեր, որոնք ուղեկցվում էին երգ ու երաժշտությամբ:

Տարածված էին նաև ուխտագնացությունները. Արագածի շրջակա գյուղերի համար Համբարձման գլխավոր ուխտավայրը շարունակում էր մնալ Արայի լեռան Ծաղկավանքը¹⁸:

Այդուհանդերձ, Քրիստոսի Համբարձման տոնի նկատմամբ պետության դիրքորոշումը դարձյալ բացասական էր: Այդ վերաբերմունքն իր արտահայտությունը գտավ խորհրդային բանահյուսության մեջ, որն ուներ որոշակի առանձնահատկություն: Բոլշևիկյան բանահյուսությունը ոչ միայն ծաղրական-ժխտողական վերաբերմունքի արտահայտություն էր այդ տոնի և նրա մասնակիցների նկատմամբ, այլև ավանդական ջանգլուումի ձևերով նոր հասարակարգ կառուցող երիտասարդության յուրօրինակ գովք էր.

Ջան Գիւլում (1931 թ.)

Մե յար ունեմ բայլևիկ,
Ջան գուլում, ջան, ջան,
Ընմեն տեղ էլ հիշելիք,
Ջան ծաղիկ, ջան, ջան,
Ինք կաշխատի, զինք կուտի,
Ջան գուլում, ջան, ջան:
Մե յար ունեմ կոմսոմոլ,
Ջան գուլում, ջան, ջան,
Ջան ծաղիկ, ջան, ջան:
Մե յար ունեմ կոմունիստ,
Ջան գուլում, ջան, ջան,
Չունի դադար ու հանգիստ
Ջան ծաղիկ, ջան, ջան,
Օրը գրի խայիր լիստ,
Ջան գուլում, ջան, ջան,
Գեղի մեջ շատ ի խիստ,
Ջան ծաղիկ, ջան, ջան:
Մե յար ունեմ պարտիզան,
Ջան գուլում, ջան, ջան,
Գործեր ունի զանազան,
Ջան ծաղիկ, ջան, ջան:

Ընձմեն շատ սիրալի,
Ջան գուլում, ջան, ջան,
Կոլխոզնիկ է ժրաջան,
Ջան ծաղիկ, ջան, ջան:
Մե յար ունեմ կոլխոզնիկ,
Ջան գուլում, ջան, ջան,
Բանվոր, խելոք, գեղեցիկ,
Ջան ծաղիկ, ջան, ջան:
Ըսկի բանս պակաս չի,
Ջան գուլում, ջան, ջան,
Դուռը տունըս բոլ ու լինք,
Ջան ծաղիկ, ջան, ջան,
Մեր յար ունեմ հարվածային,
Ջան գուլում, ջան, ջան,
Վոնչ անկիրթ ի, վոնչ խային,
Ջան ծաղիկ, ջան, ջան,
Օգգա մարթի չի լսի,
Ջան գուլում, ջան, ջան,
Բոլևիկ ի շատ կային,
Ջան ծաղիկ, ջան, ջան¹⁹:

¹⁶ ԴԱՆ, Քաղսի, 68, ԴԱՆ, Վարդենուտ, 8, ԴԱՆ, Քուչակ, 19-20, ԴԱՆ, Գեղաձոր, 81, Նիմանդ 1931, 85-88, Նիմանդ, Անաստված, 1929, № 4, 9:

¹⁷ ԴԱՆ, Ծաղկահովիտ, 35:

¹⁸ ԴԱՆ, Նորաջեն, 43:

¹⁹ Հայկական խորհրդային ֆոլկլորը 1938, 118-119:

Համբարձում-Վիճակի ավանդական երգերով գովերգվում և մեծարվում էին ոչ թե սիրո զգացումներով լեցուն աղջիկներն ու տղաները, այլ նոր հասարակարգ կառուցող երիտասարդ բոլշևիկը, կոմսոմոլը, կոլխոզնիկը և որևէ այլ կուսակցական-պաշտոնյա²⁰:

Եզրակացություններ

Այսպիսով՝

- Խորհրդային պետությունն ավանդական տոները մերժելու նպատակով մշակել էր որոշակի ծրագրեր, որոնք հիմնականում ունեին միտինգային, երթային և թատերականացված բնույթ:

- Պետության գլխավոր թիրախն այդ տոների եկեղեցական բաղադրիչներն էին:

- Ընտանիքն էր այն միակ սոցիալ-ազգակցական միջավայրը, որտեղ գոյատևեցին ավանդական տոները, որոնք այս դեպքում նույնպես զերծ չմնացին հալածանքներից:

- Ավանդականը մերժելու մեթոդներից էր նոր արարողությունների մշակումը հեղափոխական որոշակի անվանափոխումներով՝ մեծ մասամբ պահպանելով եկեղեցական տոների ժամկետները:

- Մերժվում էին ոչ միայն քրիստոնեական Զատիկը և Համբարձումը, այլև դրանց նախաքրիստոնեական կամ հեթանոսական հիմքերը:

- Ավանդական տոների նկատմամբ պետական ժխտողական վերաբերմունքն արտացոլվեց խորհրդային պոեզիայում և բանասիրության մեջ. դրանք, սակայն, դիպվածային էին և ունեին գաղափարախոսական բնույթ:

- Այդ տոներն առավել կենսունակ էին գյուղերում, որոնք ավանդույթների պահպանման և սնուցման հիմնական բնօրրանն են: Իսկ քաղաքներում, ավանդական տոնակատարությունների անկմանը զուգընթաց, նկատվում էր խորհրդային տոների տարածման միտում, որը պայմանավորված էր այդտեղ կենտրոնացված պետական-գաղափարախոսական կառույցների առկայությամբ:

- Այս տոներն ունեն արդիական նշանակություն, քանի որ, ձևափոխումներով հանդերձ, կենցաղավարում են նաև մեր օրերում: Ներկայիս տոնածիսական համակարգի որոշ դրսևորումների ակունքները պետք է դիտարկել հենց 1920-1930-ական թթ. խորհրդային քաղաքականության համատեքստում:

Գրականություն

Անաստված 1928, Հակազատկական կամպանիայի արդյունքները, Երևան, № 5-6, 24-25:

Անաստված 1928, Մատաղ, Երևան, № 5-6, 12:

Անաստված 1929, Երևան, № 3, 13:

²⁰ Մկրտչյան 2016, 173:

- Անաստված 1929, «Անաստված»-ների նոր բջիջներ, Երևան, № 5-6, 24:
- Անաստված 1932, Զատիկը և մեր պայքարը կրոնի դեմ, Երևան, № 5-6, 3-5:
- Ավանգարդ 1924, Կոմերիտական Զատիկ, Երևան, ապրիլի 17, 1:
- Արծրունի Գ. 1982, Մասսայական աթեիզմի զարգացումը Հայաստանում (1920-1930 թթ.), «ԵՊՀ հրատ.», Երևան, 46 էջ:
- Լազար 1929, Մեր գյուղում տերտերը հաջողություն չունի, Անաստված, Երևան, № 4, 17:
- Խորհրդային Հայաստան 1923, Հակակրոնական պրոպագանդայի խնդիրը, Երևան, ապրիլի 7, 1-2:
- Խորհրդային Հայաստան 1923, Զատիկ, Երևան, ապրիլի 7, 2:
- Խորհրդային Հայաստան 1923, Պաշտոնական որոշում Անդրկովկասյան աշխտողկոմատի Հայաստանի Լիազորի Զատկական տոների մասին, Երևան, ապրիլի 5-6, 4:
- Մաճկալ 1924, Զատիկի փոխարեն մայիս, Երևան, ապրիլի 25, 1:
- Մկրտչյան Ս. 2016, Հայոց տոնածիսական մշակույթը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 400 էջ:
- Մկրտչյան Ս. Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ) 1986, Ապարանի շրջան, գ. Վարդենուտ, Քուչակ, Գեղադիր, Ծաղկահովիտ, Նորաշեն, Գեղաձոր, Մելիք գյուղ, ԴԱՆ 1987, Հրազդանի շրջան, գ. Արզական, Քաղսի, Ախուրյանի շրջան, գ. Վահրամաբերդ, Կապս, Լեռնուտ:
- Նահապետյան Կ. 1929, Մեռնում է հին կենցաղը Ողջաբերդում, Անաստված, Երևան, № 4, 17:
- Ներսիսյան Հ. 1929, Տերտերի ողբը (Պարողիա), Անաստված, Երևան, № 6, 12:
- Նիմանդ 1929, Քրիստոսի Համբարձումը, Անաստված, Երևան, № 4, 8-9:
- Նիմանդ 1931, Եկեղեցական տոներ, Երևան, 124 էջ:
- Նիմանդ 1930, Ինչ տոն է Զատիկը, Անաստված, Երևան, № 4, 6-8:
- Նիմանդ 1931, Քրիստոսի հարությունը, Անաստված, Երևան, № 3, 4-6:
- Նիմանդ 1926, Հարության տոնը և նրա ծագումը, Խորհրդային Հայաստան, Երևան, ապրիլի 7, 2:
- Պետրոսյան Հ. 1930, Կորչի Զատիկը, Կեցցե հնգամյակը չորս տարում, Անաստված, Երևան, № 4, 3-5:
- Ջանգյուլում, Հայկական խորհրդային ֆոլկլորը, Երևան (1931 թ. ասել է Ղամարլուի շրջանի Զոհրապյու գյուղի 16 տարեկան կոմերիտուիի Փառո Շահբազյանը):

ԶԱՏԻԿ ԵՎ ՀԱՄԲԱՐԹՈՒՄ ՏՈՆԵՐԸ 1920-1930-ԱՎԱՆ ԹԹ.

Սամվել Մկրտչյան

Քրիստոնեական Զատիկ և Համբարձում տոների կապակցությամբ խորհրդային իշխանությունները կազմակերպում էին հակակրոնական լայնամասշտաբ միջոցառումներ: Դրանք էթնիկ և կրոնական ավանդույթները ժխտող միտինգներ, երթեր, դասախոսություններ, ներկայացումներ և ցուցահանդեսներ էին:

Մամուլը ևս ծանրաբեռնված էր հակակրոնական հոդվածներով, որոնցում մերժվում էին նույնիսկ քրիստոնեական այդ տոների այլէթնիկ և հեթանոսական զուգահեռները: Անհանդուրժողական այդ վերաբերմունքը պայմանավորված էր այն բանով, որ նոր գաղափարախոսների համար թշնամի էին ոչ միայն Զատիկը և Համբարձումը՝ իրենց սպասարկող եկեղեցականներով, այլև այդ տոների հեթանոսական նախատիպերը՝ իրենց քրմական դասով, որոնք դարձյալ «աշխատավորների շահագործողներն էին»:

Այդ մերժողականությունը հատկապես ակնառու էր Զատիկի կապակցությամբ, որը փորձում էին փոխարինել «կոմերիտական կամ կարմիր գատիկներով»: Եկեղեցիները փակելու և քանդելու հետևանքով աստիճանաբար անկում էին ապրում այդ տոների կրոնական գլխավոր արարողությունները (պատարագ, ժամերգություն, ուխտ, մատաղ և այլն): Լինում էին դեպքեր, երբ իշխանությունների ճնշմամբ տոնական այդ օրերին գյուղացիները «հրաժարվում էին ընդունել ծխական քահանաներին»:

Այդուհանդերձ, Զատիկի և Համբարձման շատ բաղադրիչներ մասամբ շարունակում էին գոյատևել՝ սկսած ծխական ուտեստից, խաղերից մինչև հավատալիքները, մատաղը, ուխտերը և մեռելոցները:

Այդ տոների նկատմամբ պետական մերժողական և ծաղրական վերաբերմունքն արտացոլվեց նաև խորհրդային պոեզիայում և բանահյուսության մեջ: Եթե Զատիկի հանդեպ առկա էր ակնհայտ մերժողականություն, ապա Համբարձման դեպքում ավանդական երգ-խաղիկները դեռահասների նվիրագործման ծեսից երբեմն վերածվում էին նոր հասարակարգ կառուցող երիտասարդ բոլշևիկի, կոմսոմոլի կամ կոլխոզնիկի գովերգության:

Բանալի բռնեք՝ Քրիստոսի Հարություն, Զատիկ, Համբարձում, վիճակ, ջան-գյուլում, խորհրդային, հավատալիք:

ПРАЗДНИКИ ПАСХИ И ВОЗНЕСЕНИЯ ГОСПОДНЯ В 1920-1930-ЫЕ ГГ.

Самвел Мкртчян

В связи с христианскими праздниками Пасхи и Вознесения Господня советские власти проводили широкомасштабные антирелигиозные мероприятия: митинги, шествия, лекции, представления и выставки, направленные против этнических и религиозных традиций. Подобная негативная настроенность была обусловлена тем, что для новой идеологической концепции были неприемлемы не только Пасха и Вознесение, включая церковных служителей, проводивших эти религиозные мероприятия, но и языческие прообразы этих праздников вместе со жрецами, которые расценивались в качестве “эксплуататоров рабочих”.

Эта нетерпимость особенно проявлялась в отношении Пасхи, которую пытались заменить “комсомольскими или красными божьими коровками”.

В результате значительно сократилось число главных религиозных ритуалов (литургия, богослужение, паломничество, матах и др.). Нередко в такие праздничные дни под давлением властей крестьяне “отказывались принять приходских священников”.

Тем не менее многие элементы Пасхи и Вознесения Господня частично продолжали бытовать, начиная с ритуальных блюд, игр, кончая матахом, паломничествами и днями поминовения усопших.

Отрицательное отношение властей к этим праздникам нашло отражение и в советской поэзии и фольклоре. Если Пасха открыто отрицалась, то песни-игры, связанные с обрядом посвящения подростков в праздник Вознесения Господня, превращались в хвалебную песню о молодом большевике, комсомольце или колхознике, которые активно содействовали становлению нового общественного строя.

Ключевые слова – Воскресение Христово, Пасха, Вознесение Господня, гадание, джан-гюлум, советский, поверье.

THE FESTIVALS OF EASTER AND ASCENSION IN 1920S AND 1930-S

Samvel Mkrtchyan

The Soviet governments organized large-scale anti-religious actions against Christian festivals: Easter and Ascension of Jesus Christ. Demonstrations, marches, lectures, performances and exhibitions were conducted against ethnic and religious traditions.

The press was filled with anti-religious articles which even denied other ethnic and pagan parallels with Christian holidays. This attitude of intolerance was conditioned by the fact, that for the new ideologists not only Easter and Ascension with its clergymen were considered as enemies, but also the pagan models of these festivals with their pagan priests, who were also considered as "exploiters of working class".

The certain disregard was particularly emphasized on Easter, which they tried to replace with Komsomol and Red Easters. As a result of the closure and demolition of churches, the main religious ceremonies of these festivals were gradually diminished (liturgy, sacrament, pilgrimage, sacrifice and etc.). There were some cases, when under the pressure of the government the villagers refused the services of the clergymen during these days.

However, some traditional components of Easter and Ascension still continued their existence, from ritual meals, games to beliefs, immolation, the remembrance day of the dead.

This rejection and mocking of these festivals are also reflected in Soviet poetry and folklore. If the disregard for Easter was very obvious, in the case of Ascension, traditional songs were sometimes transformed from the rituals of youth into praise of young Bolsheviks, Komsomol members or collective farmers.

Key words – Revelation of Jesus Christ, Easter, Ascension, allotment, jangyulum, soviets, beliefs.